Բնակչության ռասայական կազմ

Բնակչության ռասայական կազմը: Մարդիկ իրարից տարբերվում են իրենց արտաքին՝ ռասայական (մարդաբանական) հատկանիշներով, որոնք փոխանցվում են ժառանգաբար: Այդ հատկանիշների շարքում գլխավոր են մաշկի գույնը, գանգի կառուցվածքը, մազերի գանգրությունը, աչքերի բացվածքը, շուրթերի ձեւը եւ այլն:

4 մեծ ռասաներ

Տարբեր արտաքին հատկանիշներ ունեցող մարդկանց ընդունված է խմբավորել 4 մեծ ռասաներում՝ եվրոպեոիդ, մոնղոլոիդ, նեգրոիդ եւ ավստրալոիդ:



Եվրոպեոիդ ռասա

Եվրոպեոիդ ռասայի ներկայացուցիչներն ունեն սպիտակ կամ թուխ մաշկ, միջին կամ բարձր հասակ, սեւ կամ խարտյաշ մազեր: Ինչպես երեւում է քարտեզից, նրանք տարածված են Եվրոպայում, Հարավարեւմտյան եւ Հարավային Ասիայում, Ամերիկայում եւ Հյուսիսային Աֆրիկայում:

Նեգրոիդ ռասա

Նեգրոիդ ռասային բնորոշ հատկանիշներն են մաշկի մուգ գույնը, գանգուր մազերը, լայն քիթը, հաստ շուրթերը: Նեգրոիդները մեծամասնություն են կազմում Կենտրոնական եւ Հարավային Աֆրիկայում, բնակվում են նաեւ Ամերիկայում: Դրանք XVII–XVIII դարերում Աֆրիկայից այստեղ ստրկավաճառության բերված նեգրերի հետնորդներն են:

Մոնղոլոիդ ռասա

Մոնղոլոիդ ռասային բնորոշ են սեւ, կոշտ եւ ուղիղ մազերը, մաշկի թուխ, հաճախ դեղնավուն գույնը, տափակ դեմքը, խիստ արտահայտված այտոսկրերը, աչքի նեղ բացվածքը, վերին կոպի խիստ զարգացած ծալքը: Տարածման հիմնական շրջաններն են Արեւելյան եւ Հարավարեւելյան Ասիան եւ Ամերիկան:

Ավստրալոիդ ռասա

Ավստրալոիդ ռասայի ներկայացուցիչներն առանձնանում են մուգ գույնի մաշկով, հաստ շուրթերով, լայնանիստ քթով, զարգացած մազածածկույթով: Դրանք Ավստրալիայի, Օվկի-անիայի, ինչպես նաեւ Հնդկաստանի հարավի եւ Ինդոնեզիայի որոշ շրջանների տեղաբնիկներն են:

Հույսով եմ հավանեցիք

- Մարդը մնում է մարդ անկախ մաշկի գույնից, արտաքին տեսքից, մեծ քթից կամ շրթունքներից: Կարևորը մարդկային արժեքներն են: